

HASG NEWS



Տեղեկատու թիւ 2, Մարտ 2009

Տնօրէնի Զեկոյց

Սիրելի Ծնողք,

Ինչպէս նախօրօք ձեզ տեղեկ պահած էի, թէ այս տարի ձեմարանի կազմը գլխավորաբար պիտի կեդրոնանայ կրթական մակարդակի բարելաման եւ զարգացման ծրագրին վրայ:

Շաբաթ Մարտ 14-ին, վերոյիշեալ ծրագրի առնչութեամբ տեղի ունեցաւ ուսուցչական միօրեայ հաւաք, համադրելու զանազան միտքեր եւ ծրագիրներ: “Literacy Works” ծրագրի կազմակերպիչ մարմնէն, ներկայացաւ Տիկ. Թրիչ Ուիլքըս, որ օգտաշատ տեղեկութիւններով հարստացուց ուսուցչակազմի գիտելիքները: Տարուայ ընթացքին պիտի շարունակենք որդեգրել նմանօրինակ ծրագիրներ, որոնք պիտի ընդգրկեն նաեւ ծնողական հաւաքներ: Յաւելեալ մանրամասնութեամբ տեղեկ կը պահենք ձեզ յառաջիկային:

Այս շաբաթ կանաչ պահարաններով ձեզ կ'ուղարկենք “*Parents Guide to the NSW Primary Syllabus*” գրքոյկը, որուն մէջ մանրամասն բացատրուած է կրթական ծրագրի բարելաման առնչուած հարցերը: Յաւելեալ տեղեկութիւններու համար նախակրթարանի բաժնի համար կարելի է այցելել ուսումնական խորհուրդի կայքէջը www.k6.Boardofstudies.nsw.edu.au, իսկ երկրորդական բաժնի համար՝ www.Boardofstudies.nsw.edu.au:

Դաշնակցային կառավարութեան “Building the Education Revolution” յառաջացուցած ծրագիրը արդէն իսկ ի գործ դրուած է: Այս ծրագրին համար կառավարութիւնը տրամադրած է մօտաւորապէս \$15.4 պիլիոն տոլար Աւստրալիոյ բոլոր դպրոցներուն: ՀԱՍԳ ձեմարանը եւս իր դիմումնագիրը ներկայացուցած է “National School Pride” ծրագրին, որուն միջոցաւ կարելի պիտի ըլլայ կարգ մը տնտեսական փոփոխութիւններ եւ բարելաւումներ կատարել:

ձեմարանի խնամակալութիւնը դիմած է պատկան մարմիններուն, որ ձեմարանը այս նպաստներու շնորհիւ կարենայ նաեւ բազմաթիւ նպատակներու համար օգտագործուելիք հսկայ սրահ մը ունենալ իր հողին վրայ: Ծնորհակալութիւն Պրն. Շահէ Սիմոնեանին իր ջանքերուն սոյն դիմումնագրի ամբողջացման աշխատանքին մէջ:

Մեր յառաջիկայ ծրագիրներուն մէջ կայ նաեւ յատուկ դիմումներ կատարել, կառավարական նպաստներ ստանալու, որոնք պիտի տրամադրուին ձեմարանէն ներս տարբեր լեզուներ ուսուցանելու ծրագրին: Յաւելեալ տեղեկութիւններ ձեզ կը փոխանցեմ ապագային:

Քայլար Միքայէլեան
ՀԱՍԳ ձեմարանի Տնօրէն

2009 Տարեչրջանի ՀԱՍԳ Ճեմարանի Աշակերտական Խորհուրդ

Ինչպէս ամէն տարի այս տարի եւս տեղի ունեցաւ ճեմարանի աշակերտական խորհուրդի ընտրութիւնները: Աշակերտական խորհուրդը կը բաղկանայ խումբ մը նուիրեալ աշակերտներէ, որոնք կը լսեն աշակերտներու մտահոգութիւններն ու դժուարութիւնները եւ զանոնք կը փոխանցեն պատկան մարմիններուն լուծումներ եւ կամ հարցերուն պատասխաններ գտնելու նպատակով: Միեւնոյն ատեն նաեւ անոնք կը կազմակերպեն նիւթական հասոյթ ապահովող ձեռնարկներ, որոնցմէ գոյացախ նիւթական հասոյթը կը տրամադրուին ճեմարանին եւ աշակերտութեան պիտանի կարիքները ապահովելու:

Այս տարուայ աշակերտական խորհուրդի անդամներն են.-

12-րդ կարգէն

Հայկ Վարդուկեան

Տաննա Մանուկեան

Լինա Մարգարեան

Սուզաննա Գիւբէլեան

11-րդ կարգէն

Ալիշա Էկիւլեան

Անահիտ Սարեան

10-րդ կարգէն

Անդրանիկ Շուկայեան

Անդրանիկ Տէր Թաթէոսեան

9-րդ կարգէն

Ռօզմէրի Հալապլեան

Գէորգ Ֆաթթուհ

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներ այս տարուայ աշակերտական խորհուրդին: Յոյսով ենք, որ նոր թափով եւ նոր գաղափարներով յաջողութեամբ կ'աւարտեն այս տարուայ ծրագիրները:

Գրասենեակի Պատասխանատուի Զեկոյց

Սիրելի Մտողք,

նկատելի է ձեր նամակներէն եւ հեռաձայններէն թէ մեծ թիւով ծնողներ իսկապէս ուրախ են եւ գոհ՝ մեր տեղեկատուի նոր ձեւաւորումէն: Նամանաւանդ, որ ներկայիս բոլոր դպրոցական տեղեկութիւնները եւ յիշեցումները, կանաչ պահարաններու փոխարէն ձեզ կ'ուղարկուին ի- նամակով (email) ով:

Ներկայիս մեր ընտանիքներէն 85 առ հարիւրը մեզ փոխանցած են իրենց ի-նամակի հասցէները, որոնց համար մեծապէս շնորհակալ ենք, ինչպէս նաեւ պատրաստ ենք լսելու ձեր յաւելեալ գաղափարները այս հարցով: Կը յիշեցնեմ նաեւ, որ կանոնաւոր կերպով այցելէք մեր կայքէջը, ուր պիտի գտնէք ճեմարանին վերաբերեալ ինչպէս նաեւ գաղութային գանազան լուրեր եւ յայտարարութիւններ: Կայքէջի հասցէն է.- www.hasg.nsw.edu.au

Ուորին շնորհակալութիւններ կրպակի պատասխանատուներ՝Տիկ. Օֆիկ Դիլանչեանին եւ Տիկ. Հիլտա Ապնուսին, որոնք սահուն կերպով կը կառավարեն կրպակի գործերը եւ օրական թարմ ու համեղ ուտելիքներ կը հրամցնեն մեր աշակերտութեան եւ աշխատակազմին:

Շնորհակալութիւն նաեւ բոլոր կամաւոր մայրերուն, որոնք իրենց ժամերէն կը տրամադրեն գործելով կրպակէն ներս: Վստահ եղէք որ քաջ կը գիտակցինք ձեր տարած նուիրական աշխատանքին: Վարձքերնիդ կատար:

Տեղեկատուի վերջին էջով կը գտնէք կամաւոր գործերու դիմումագիրը: Կը խնդրեմ որ ձեզ յարմարած տուփիկը լրացնէք եւ վերադարձնէք ճեմարանի գրասենեակ անմիջապէս:

Երեքշաբթի 24 Մարտին, ճեմարանէն ներս կիրարկուած երէց դեկավարութիւն եւ դասախօսական ծրագրին իր պատուական մասնակցութիւնը բերաւ երկար տարիներու բարեկամա եւ գործընկերա Պրն. Իյըն Գիրնըն, մեր աշակերտներուն դասախօսելու, մեր դերին եւ պատասխանատուութեան շուրջ հանդէպ մեր միջավայրին եւ շրջապատին:

Սոյն տեղեկատուի կցուած (xxx) նշուած էջը կը պարունակէ կարելոր տեղեկութիւններ կապոյտ հազի (Whooping cough) շուրջ: Բարեհաճեցէք ընթերցել տեղեկութիւնները ուշադրութեամբ եւ հետեւեցէք առաջարկուած ցուցմունքներուն ի պահանջել հարկի:

Ուէնտի Բանկի

Գրասենեակի վարիչ տնօրէնուհի

Երէց Ղեկավարութեան եւ Դաստիարակչական Ծրագիր

ՀԱՍԳ ճեմարանի դասախօսական ծրագրի յաջորդ հիւրն է Օր. Լիսա Գարաբլէթ: Օր. Գարաբլէթ թղաթկից եւ գեկուցագիր է "Australian Financial Review" -ի մարմնին: Անոր յօդուածները լոյս տեսած են "Sydney Morning Herald" եւ "Daily Telegraph" տեղական թերթերուն մէջ:

2007-ին ան աւարտած է իր համալսարանական ուսումը քաղաքական եւ միջազգային յարաբերութեանց բաժնին մէջ: Լիսա Գարաբլէթ մեզ պիտի այցելէ Երեքշաբթի 19 Մայիսին: Հրաւիրուած են բոլոր ծնողները:

ՀԱՍԳ Ճեմարանի Մաքրութեան Օրը

Ուրբաթ 27 Փետրուարին, բոլորս մեր մասնակցութիւնը բերինք մաքրելու մեր շրջապատը: Այս գործը կատարեցինք, որովհետեւ Կիրակի 1 Մարտին Աւստրալիոյ Ազգային Մաքրութեան օրն էր: Մեր դպրոցի տարբեր անկիւնները երթալով, ձեռնոցներ հագած աղբերը հաւաքեցինք եւ ճեմարանը մաքրեցինք: Մեր բոլոր յոգնութիւնը սակայն ի գուր չէր, որովհետեւ ի վերջոյ ունեցանք մաքուր եւ գեղեցիկ վարժարան մը:

Թարգմանուած՝

Նախակրթարանի պէտերու գրութենէն

Գարուն Պօղոսեան եւ Նարինէ Կիւլիւմեան

Չորրորդ Դասարանի Դաշտապտոյտը

Այս ուսումնական շրջանին Չորրորդ դասարանը իր գիտութեան դասանիւթի ընդմէջէն կը սորվի տարբեր ազգերու ճաշերուն ծանօթանալու եւ համտեսելու նիւթին շուրջ:

Երկուշաբթի Մարտ 2-ին, Չորրորդ կարգի ծնողներն ու աշակերտները միասնաբար դաշտապտոյտ մը կատարեցին ճեմարանի կանաչ դաշտին վրայ:

Իւրաքանչիւր աշակերտ ճաշատեսակ մը բերած էր ինչպէս՝ չինական, արաբական, հայկական եւայլն...: Հաճելի օրուայ մը ընթացքին աշակերտները սորվեցան տարբեր ազգերու ճաշատեսակներուն մասին ինչպէս նաեւ իրենց ծնողներուն հետ վայելեցին դպրոցի գեղեցիկ ու դալար բնութիւնը:

Կիթարի դասընթացքները կը շարունակուին այս տարի եւս

Ինչպէս անցնող երկու տարիներուն, այս տարի եւս կիթարի դասընթացքները կը շարունակուին ճեմարանէն ներս: Դասատուն է Պրն. Սամուէլ Մինասեան: Դասընթացքները տեղի կ'ունենան Չորեքշաբթի օրերը: Բոլոր այն ծնողները, որոնք կը փափաքին արձանագրել իրենց զաւակները կիթարի դասընթացքներուն կը խնդրուի հեռաձայնել ճեմարանի գրասենեակ 9970 6984 թիւին կապ հաստատելու երաժշտութեան ուսուցիչին հետ:



Արտագին Շնորհակալություն

Մեր խորին շնորհակալությունները բոլոր նուիրեալ մայրերուն, որոնք իրենց ծառայությունը կը բերեն այս տարի դպրոցի կրպակէն ներս: Յատուկ շնորհակալություն նաեւ մայրեր՝ Տիկ. Անահիտ Նազարեանին, Տիկ. Վերօն Էկիւլեանին եւ Տիկ. Անի Մուրատչալեանին, որոնք ոչ միայն սիրայօժար իրենց ժամերը տրամադրեցին այլ նաեւ յանձն առին մէկ օրուայ ճաշի պատրաստությունը եւ հոգացին անոր բոլոր ծախսերը:

Կամաւոր ծնողներու կարիքը ունինք ձեմարանի կրպակէն ներս

Ձեմարանի կրպակի պատասխանատու մայրերը խիստ կարիքը ունին կամաւոր ծնողներու օգնութեան շաբթուայ տարբեր օրերու ընթացքին: Առայժմ առաջին շրջանին համար կարիքը ունին երկուշաբթի, երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերուն առաւօտեան ժամը 9.30-էն մինչեւ կէսօրուայ ժամը 1.30: Բոլոր այն ծնողները, որոնք կարելիութիւնը ունին իրենց աջակցությունը բերելու կրպակի աշխատանքներուն, կը խնդրուի կապ հաստատել Տիկ. Հիլտա Շահմուրատեանին եւ կամ Տիկ. Օֆիկ Դիլանչեանին հետ՝ հեռաձայնելով ձեմարանի գրասենեակ 9970 6984 թիւին:

Մանկապարտէզի Լողալու Մրցախաղերը

Հինգշաբթի 19 Մարտին, տեղի ունեցան ձեմարանի տարեկան լողալու մրցախաղերը երկու բաժինով: 3-12րդ կարգերու աշակերտներու մրցախաղերը տեղի ունեցան Warringah Aquatic Centre-ի մէջ, իսկ Մանկապարտէզ, Առաջին եւ Երկրորդ կարգերու աշակերտները տարբեր խաղերով նախապատրաստութեան յառաջիկայ լողալու մրցախաղերուն:

Փոքրերու խաղերը շաճ հաճելի էին, իսկ ուրախ եւ աշխոյժ մթնոլորտը, գոյնգոյն տարազներն ու ժապաւէնները, մայրերու եւ նոյնիսկ մեծ մայրերու մասնակցությունը սոյն խաղերուն աւելի եւս յատկանշական ու յիշատակելի դարձուցին օրուայ ծրագիրը:

Շնորհակալություն ուսուցիչներուն, որոնք ծրագրած էին օրուայ յատագիրը ամենայն բժախնդրութեամբ, շնորհակալություն նաեւ բոլոր ներկայ ծնողներուն, որոնք եկան եւ մեծապէս գնահատեցին տարուած մեծ աշխատանքը:

